

չեւ նեխեցան մարմինք լոցա եւ կողպտեցան, եւ յաղկեցան. քակեցան լուծան ի միմեանց, ցրուեցան ոսկերք լոցա: 12 Եւ բազում ամիսք անցանէին ի վերայ իրացն. ապա իշխեցին մտանել ժողովել բառնալ հանել անտի զուկերս լոցա, եւ գտանէին զնոսա լոկ ցամաքեալ զկճղացեալ զոսկորս լոցա. եւ հանէին յայգւոջն եկեղեցոյն, որում Ազարակն կոչեն: 13 Բայց մնաց Աթանազենի որդի ի Բամբշնէ ի քեռէ թագաւորին, եւ անուն Նորա Ներսես, որ եկաց յաթոռ հայրապետացն առ յապայ ամենայն երկիր Յայոց: 14 Բայց Պապայ ի բուն ի կնոջէն ոչ մնաց¹, այլ էր Նորա հարճ մի ի գաւառէն Տարաւնոյ, ի Յացեաց գեղջէ կարճագատացն. եւ մնաց որ ի հարճէ անտի ի Յացեկացոյն որում անուն իւր² որդւոյ հարճին Վրիկ կոչէր:

ԳԼՈՒԽ Ի.

1 Յաղագս Տիրանայ թագաւորին, եթէ ո՛րպէս մատնեցաւ յիւրմէ սենեկապետն ի Փիսակայ Սիւնոյ, եթէ՛ կորեաւ, եւ գերեցաւ ի Վարազէ իշխանէն պարսկէ. եւ կամ ո՛րպէս ամենայն երկիրն Յայոց ընդ նմին գերեցաւ:

2 Բայց դեռ բարեկամութիւն էր ի մէջ թագաւորացն երկոցունց, ի մէջ թագաւորին Յայոց եւ Պարսից: 3 Նստեր յաշխարհին Ատրպատական որում անուն կոչէր բարձգահին³ իւրում Շապուհ Վարազ: 4 Արդ մինչ դեռ եւս յոյժ խաղաղութիւն էր ի մէջ թագաւորացն երկոցունց, անկաւ ի տեառնէ խռովութիւն ոչինչ բանիւք՝ արամբ միով անարգաւ, որ ոչ ինչ պակաս քան զդել էր մոլութեամբ, որոյ անուն Փիսակ կոչիւր. որ սենեկապետն էր արքային Տիրանայ, ազգաւ սիւնի: 5 Սա դեսպանազնացեալ⁴ էր առ Վարազ Շապուհ, զոր թողեալն էր սահմանապահ արքային Պարսից յԱտրպատական աշխարհին:

6 Չայնու ժամանակաւ ձի մի էր երիվար արքային Տիրանայ, զորմէ կարի զարմանային: 7 Եւ էր ձին գունով ճարտուկ ճանճկէն. սա լի էր քաջութեամբ, անուանի եւ հոյակապ, մեծ եւ բարձր՝ երկայն քան զամենայն ձիս, եւ տեսանելով քան զայլս գեղեցիկ, զանազան՝ որ համեմատ նմա այլ ոչ գտանէր: 8 Չորմէ յերթալն իւրոյ դեսպանութեանն՝ սենեկապետն արքային Փիսակ մատնեաց զձին Վարազայ, վասն զի բարեկամացեալ էր ընդ նմա. եւ ի նմանէն ինքն թուղթ առեալ, բերեալ մատուցանէր⁵ արքային Յայոց: 9 Չորմէ չհաւանեալ տալ⁶, ոչ առնոյր յանձն: 10 Այլ վասն զի կասկածեր յառնէն՝ զի

1 Յօր. չիք որդի

2 Յամենայն օրինակս՝ որում անուն էր որդւոյ

3 Յօրին. միում՝ բարձր գահին

4 Յօրին. միում՝ դեսպանազնաց էր

5 Յօրին. միում՝ բերել մատուցանել

6 Յօրինակին պակասէ՝ տալ. եղաւ ըստ այլ օր.